

լուրջ երեսին ժպիտ մը չի կրցաւ արգիլել, եւ լեռնցի ծերակոյտը այդ ժպտին ծիծաղներով, ուրախութեան ձայներով եւ շշուռներով պատասխանեց: Սուրեն տեսնելով թէ այդ մարդիկը այնչափով գոհ եղան, էլ պատասխան չի տուաւ այդ ճառին: Երեկոն սկսած էր՝ ընթրիքն ծառայեցին իւր դռան առաջ դուրսը, ուր մեծ կրակ մը կը լուսաւորէր եւ միանգամայն կը տաքցներ, եւ լեռնային երաժշտութիւն մը եւ կաթաւ գիշերուան մէկ մասը գրաւեց: Ինք քաշուեցաւ կ'ես-գիշերուան մօտ իւր խրճիթը, մտածելով Սեւ լեռան իշխանութեան եւ այրի իշխանուհուոյն վրայ, որ այնչափ գեղեցկութիւն հինքն կը պարունակէր, մինչեւ որ քունը աչքերուն իջաւ: Երկու-երեք ժամ քունէ վերջ արթնցաւ, դռան քով կամաց ձայնով խօսելու շշուռ կար, ուշ դնել սկսաւ, եւ լաւ լսելու համար մօտեցաւ դռան, նայեցաւ՝ ծակէ մը տեսաւ դուրսի կրակին մօտ երկու զինեալ երիտասարդ պառկած քուն կը լինէին, երկուք էլ ծնկվնին ծալլած նստած կը խոսէին, մին կ'ըսէր. — Ո՛ւր պիտի երթայ, ձին որ Միքայէլ հրեշտակապետի ձիուն կը նմանի, միայն թելեր կը պակսին, եպիսկոպոսին տունը կապուած է, իշխանուհին կ'ուզայ վաղն առաւօտ, կը տեսնէ, կրիաւնի այդ մարդուն անտարակոյս մէկ մաղ ճերմակ չունի ոչ գլխուն եւ ոչ ծնօտին վրայ, թեպէտ քիչ մը խորշումեալ է ճակատը եւ դաժան նայուածքը: Բայց մեր վախճանեալ Ամիրն աւելի գեղեցիկ չէր, եւ ասկից աւելի քաջ չէր: Այս մարդուն գեղեցկութիւնը բազկին վրայ է:

— Լաւ՛, բայց կին ըսածդ իւր քմահաճոյքն ունի, մանաւանդ մեր իշխանուհին, որոմն ներքին կեանքը զարմանալի կը պատմեն, ո՛ւր մնաց որ այդ մարդն էլ իւր երկիրը կին, գաւակ ունի եղեր:

— Բայց երբ իրեն կին, իշխանութիւն կ'ուտան հոս, երբ իրեն ծառայելու համար այնչափ ժողովուրդ պատրաստ կը մնան, եւ ինք գոհ չլինիր, այն ատեն, երբ աղաչանք, պաղատանք բաւական չլինին զինք համոզելու բռնութիւն ի գործ կը դնեն: «Քանի մը օր բանտ կը մնա՝ կը համոզուի»: Այսպէս կ'ըսէին ծերերը, ես լսեցի:

— Աստուած խելք ու միտք տա այդ մարդկանց, զիս ուզէր իշխանուհին՝ ես ամենեւին չէի նազեր, սիրով յանձն կ'առնուի իր հետ ամուսնանալ, — ըսաւ մէկը ծիծաղելով:

— Նա էլ քեզպէս ոչինչ երիտասարդն ի՞նչ պիտի ընէ. սա սովորական մարդ չէ, վտանգի, պատերազմի ժամանակ մեզ կարող է կառավարել: Մանաւանդ որ կայսրը մեր վրայ կը բռնանայ, մեզ հաւատքէ կուզէ հանել:— Բայց ժամանակ է, որ մեր ընկերներն արթնցնենք, բաւական քնացան: